

Ո Ր ՈՇ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 29.01.2021թ. թիվ 2112196464 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<< 15 >> 02 2021թ. 7-13- 1990

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գրիգոր Աղաբեկյանի ՄԴ/10664-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի զանգվածի 1 շենքի 39 բնակարանի բնակիչ Գրիգոր Աղաբեկյանը դիմումով խնդրել է վերանայել և բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 29.01.2021թ. թիվ 2112196464 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գրիգոր Աղաբեկյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Չափումների միասնականության ապահովման մասին>> << օրենքի պահանջներով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում շահագործվող բոլոր արագաչափ սարքերը սահմանված ժամկետում և կարգով ստուգաչափված են:

Ըստ արագաչափ սարքի տեխնիկական բնութագրի՝ այն փոխադրամիջոցը, որի արագությունը համարվում է չափված, պետք է առնվազն մասամբ գտնվի **նկարի երրորդ քառորդում՝** ընթացքի ուղղությամբ (**գնահատման գոտի**): Գնահատման գոտում չպետք է լինի միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց՝ նույնիսկ մասամբ: **Հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցները կարող են գտնվել գնահատման գոտում:**

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 68-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ, իսկ այն տարածքներում, որոնց մուտքն ու ելքը նշված են 5.21՝ «Բնակելի գոտի» և 5.22՝ «Բնակելի գոտու վերջ» նշաններով, ինչպես նաև բակային տարածքներում՝ 20 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:



Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Վիճարկվող որոշման անհատական ծածկագրի տակ զետեղված լուսանկարի ուսումնասիրությամբ հստակ է դառնում, որ չի կարող կասկածի տակ դրվել իրավախախտումը հենց <<BMW>> մակնիշի 36CL697 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցով կատարված լինելու հանգամանքը, **քանի որ այն գտնվում է լուսանկարի գնահատման գոտում, որտեղ միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց առկա չէ:**

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Երևան քաղաքի Շիրակի փողոցի հատվածում տեղադրված արագաչափ սարքով արձանագրվել է <<BMW>> մակնիշի 36CL697 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի արագությունը՝ 72 կմ/ժ, հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի 10 կմ/ժ չափը, գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը 2 կմ/ժ-ով, ինչի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար վարչական տույժ նշանակելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 29.01.2021թ. թիվ 2112196464 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժնին, Գրիգոր Աղաբեկյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Գրիգոր Աղաբեկյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժնի:



**Ե. Կարապետյան**